Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն  N 31(1)

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի
2010 թվականի հունիսի 1-ին ժամը 9.30-ին կայացած նիստի

---

**քաղ. Երևան**

**Մասնակցում էին՝**

| | |
|---|---|
| Վ. Ներսիսյանց | ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի փոխնախագահ |
| Ա. Ավետիսյան | ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ |
| Վ. Մարության | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ |
| Գ. Բաղալյան | ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ |
| Ս. Պետրոսյան | ՀՀ սփյուռքի նախարարի տեղակալ |
| Ռ. Հարությունյան | «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն |
| Ա. Գրիգորյան | Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղար |
| Յու. Շուքուրյան | ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի փոխնախագահ, ակադեմիկոս |
| Գ. Չուգասզյան | «Տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամ» ՀԿ-ի նախագահ |
| Հ. Մուսայելյան | «Սինոփսիս Արմենիա» ընկերության գլխավոր տնօրեն |
| Կ. Վարդանյան | «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ-ի գործադիր տնօրեն |
| Բ. Դյութուա | «Օրանժ Արմենիա» ընկերության գլխավոր տնօրեն |
| Գ. Բարսեղյան | «Մայքրոսոֆթ ԱրԷյ» ՍՊԸ-ի տնօրեն |
| Ա. Վարդանյան | «Վիասֆեր Տեխնոպարկ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն |
| Ա. Բալդրյան | «Յունիքոմփ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն |

| | |
|---|---|
| Բ. Ենգիբարյան | «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի տնօրեն |
| Հ. Խանջյան | «Բի Լայն» ՍՊԸ-ի նախագահ |
| Հ. Ավոյան | «Սորսիո» ՓԲԸ-ի տնօրեն |
| Հ. Չոբանյան | «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն |
| Խ. Կարայան | «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» ՓԲԸ-ի նախագահ |
| Ա. Խաչատրյան | «Ֆայբրնետ քոմյունիքեյշն» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն |
| Գ. Պարոնյան | Եռաչափ մոդելավորողների հայկական ասոցիացիայի ներկայացուցիչ |

**Հրավիրվածներ՝**

| | |
|---|---|
| Ս. Ղոնաղչյան | ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ |
| Ա. Հարությունյան | ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության փորձագետ |
| Հ. Արմենյան | Հայաստանի ամերիկյան համալսարանի նախագահ |
| Ա. Տոնոյան | «Վեբ» ՍՊԸ-ի նախագահ |
| Ի. Մկրտումյան | «Հայաստանի ինտերնետ միություն» ՀԿ-ի նախագահ |
| Ա. Քուչուկյան | «Երևանի մաթեմատիկական մեքենաների ԳՀԻ» ՓԲԸ-ի գլխավոր ինժեներ |
| Գ. Կարապետյան | «Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ-ի նախագահ |
| Դ. Սանդուխչյան | «ԱրմենՏել» ՀՁ» ՓԲԸ-ի իրավաբանական տնօրինության տնօրեն |
| Ա. Ղազարյան | CAPS ծրագրի տնօրենի |
| Ա. Աբրահամյան | CAPS ծրագրի SS կլաստերի համակարգող |
| Վ. Կիրակոսյան | ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության պետ |
| Մ. Հակոբյան | «Տեղեկատվական իրավունքի և քաղաքականության կենտրոն» ՀԿ-ի իրավախորհրդատու |

| | |
|---|---|
| Վ. Հովհաննիսյան | «Օրանժ Արմենիա» ծրագրի կորդինատոր |
| Ա. Սարգսյան | «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղարության առաջատար մասնագետ |
| Ա. Հայրիյան | «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղարության առաջատար մասնագետ |
| Մ. Մելիքյան | «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի հասարակայնության հետ կապերի մասնագետ |

1. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախորդ նիստերի հանձնարարականների կատարման ընթացքի մասին
---

(Ա. Գրիգորյան, Տ. Սարգսյան)

**1. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նիստի 30(4) արձանագրության՝**

1) 1-ին կետի «գ» ենթակետով ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար Դ. Սարգսյանին հանձնարարվել էր նախապատրաստել հանձնարարական՝ ուղղված ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ Գ. Խաչատրյանին՝ հանձնարարելով իրականացնել համապատասխան միջոցառումներ՝ բացառելու համար մաքսակետերում անհարկի կամ անպատեհ առիթով որևէ սերտիֆիկատ կամ հավաստագիր պահանջելը.

2) 3-րդ կետի «բ» ենթակետով, «Երևանի մաթեմատիկական մեքենաների ԳՀԻ» ՓԲԸ-ի գլխավոր ինժեներ Ա. Քուչուկյանի առաջարկությանը համապատասխան, ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար Դ. Սարգսյանին հանձնարարվել էր էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման աշխատանքների կազմակերպման շրջանակներում նախապատրաստել համապատասխան որոշման նախագիծ՝

հանձնաժողովի ստեղծման և առաջնահերթ միջոցառումների ցանկի հաստատման մասին։

2. **ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ Ս. Ղոնաղչյանը** տեղեկացրեց, որ, ի կատարումն նշված հանձնարարականների՝

1) խնդիրը կարգավորվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2010 թվականի մարտի 2-ի N 407-Ա հրամանով, ըստ որի համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա ապրանքների համապատասխանության հավաստագիր կպահանջվի միայն ՀՀ կառավարության 2004 թվականի հուլիսի 29-ի N 1149-Ն որոշմամբ հաստատված ցանկում ներառված ապրանքների ներմուծման ժամանակ.

2) 2010 թվականի փետրվարի 25-ի ՀՀ կառավարության նիստի 32-րդ կետով հավանության է արժանացել «Հայաստանի Հանրապետության էլեկտրոնային հասարակության ձևավորման հայեցակարգին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշումը, որում ներառված են ինչպես միջոցառումների ժամանակացույցը, այնպես էլ էլեկտրոնային կառավարման խորհրդի կազմը։

**Քննարկումներից հետո որոշվեց՝** ընդունել ի գիտություն ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ Ս. Ղոնաղչյանի հաղորդումը Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նիստի 30(4) արձանագրությամբ տրված հանձնարարականների կատարման վերաբերյալ։

2. Նոյեմբերի 5-8-ը ԱՄՆ-ի Սան Հոսե քաղաքում կայացած «Արմթեք 09» համաժողովի արդյունքների և Փարզում հունիսի 18-ին նախատեսվող «Արմթեք 10» համաժողովի կազմակերպման խնդիրների մասին
---

(Գ. Բաղալյան, Տ. Սարգսյան)

ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի ՏՏ վարչության պետ Վ. Կիրակոսյան զեկուցեց՝

1) 2009 թվականի նոյեմբերի 5-8-ը Ամերիկայի Միացիալ Նահանգների Սան Հոսե քաղաքում կայացած «ԱրմԹեք 09» համաժողովի արդյունքները.

2) 2010 թվականի հունիսի 18-ին Փարիզում նախատեսվող «ԱրմԹեք 10» համաժողովի կազմակերպման խնդիրները, մասնավորապես, տեղեկացնելով, որ Փարիզում նախատեսվող «ԱրմԹեք 10» համաժողովի կազմակերպումն առաջարկվել է հետաձգել, և փոխարենը այն կազմակերպել Երևանում:

**Քննարկումներից հետո որոշվեց՝**

1) հետաձգել 2009 թվականի նոյեմբերի 5-8-ը ԱՄՆ-ի Սան Հոսե քաղաքում կայացած «Արմթեք 09» համաժողովի արդյունքների մասին հաշվետվության լսումը.

2) հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանին՝

ա. ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին ներկայացնել 2009 թվականի նոյեմբերի 5-8-ը ԱՄՆ-ի Սան Հոսե քաղաքում կայացած «Արմթեք 09» համաժողովի արդյունքների մասին գրավոր հաշվետվություն և հիմնավորված եզրակացություն,

բ. «Արմթեք 10» համաժողովի աշխատանքնային խմբում հրատապ քննարկել՝

- 2010 թվականի հունիսի 18-ին Փարզում նախատեսվող «Արմթեք 10» համաժողովի ժամկետի հետաձգման, ինչպես նաև հետագա կազմակերպչական այլ հարցեր և հաջորդ Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նիստի քննարկմանը ներկայացնել գրավոր առաջարկություններ,

- Հայաստանի ամերիկյան համալսարանի նախագահ Հ. Արմենյանի առաջարկությանը համապատասխան՝ ԱրմԹեք միջոցառումների գործնական նպատակների հստակեցման և նպատակների իրագործման հարցերը,

- «Երևանի մաթեմատիկական մեքենաների ԳՀԻ» ՓԲԸ-ի գլխավոր ինժեներ Ա. Քուչուկյանի առաջարկությանը համապատասխան՝ «ԱրմԹեք 09» համաժողովի կայքէջում «ԱրմԹեք 09» մասնակիցների ելույթների գրավոր ամփոփագրերի տպագրման և (կամ) տեղադրման հարցը,

- «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ-ի գործադիր տնօրեն Կ. Վարդանյանի առաջարկությանը համապատասխան՝ «DigiTec» միջոցառումների շրջանակներում ԱրմԹեք միջոցառումների անցկացման հնարավորության հարցը:

3. «Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային հասարակության ձևավորման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 2010 թվականի փետրվարի 25-ի արձանագրային որոշման վերաբերյալ
---

(Գ. Բաղալյան, Տ. Սարգսյան)

ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի ՏՏ վարչության պետ Վ. Կիրակոսյանը ներկայացրեց տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության էլեկտրոնային հասարակության ձևավորման հայեցակարգի հաստատմանը նախորդած միջոցառումները և Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային հասարակության ձևավորման հայեցակարգի հիմնական դրույթները:

**Քննարկումներից հետո որոշվեց՝**

1) հավանություն տալ «Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային հասարակության ձևավորման հայեցակարգին:

2) հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանին՝ էլեկտրոնային կառավարման խորհրդի անդամների հետ համատեղ հրատապ հրավիրել նորաստեղծ էլեկտրոնային կառավարման խորհրդի նիստ՝

ա. քննարկելով Հայաստանի Հանրապետության էլեկտրոնային հասարակության ձևավորման հայեցակարգի իրականացման մեխանիզմները,

բ. նշանակելով պատասխանատու կատարողներ,

գ. ամրագրելով ֆինանսավորման աղբյուրները, ինչպես նաև գնահատելով ծրագրերի իրականացման գործընթացի հնարավոր ռիսկերը,

դ. էլեկտրոնային կառավարման խորհրդի աշխատանքներում ներգրավելով նաև Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղար Ա. Գրիգորյանին։

4. Երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների արտահանման, ինչպես նաև ՀՀ տարածքով դրանց տարանցիկ փոխադրման վերահսկողության մասին
---

(Կ. Վարդանյան, Տ. Սարգսյան)

«Տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» հասարակական կազմակերպության տնօրեն Կ. Վարդանյանը ներկայացրեց երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների արտահանման, ինչպես նաև ՀՀ տարածքով դրանց տարանցիկ փոխադրման վերահսկողության վերաբերյալ ՀՀ օրենքի մասին տեղեկատվություն և հայտնեց իր մտահոգությունը տվյալ օրենքից բխող մի քանի դրույթների շուրջ։

**Քննարկումներից հետո որոշվեց՝**

հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանին՝

ա. ձևավորել աշխատանքային խումբ՝ ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության, ՀՀ կառավարության աշխատակազմի և բիզնես-հանրության համապատասխան ներկայացուցիչների, «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ-ի գործադիր տնօրեն Կ. Վարդանյանի, «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի տնօրեն Բ. Ենգիբարյանի, «Երևանի մաթեմատիկական մեքենաների ԳՀԻ» ՓԲԸ-ի գլխավոր ինժեներ Ա. Քուչուկյանի և «Յունիքոմփ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Ա. Բալդրյանի մասնակցությամբ,

բ. մինչև հաջորդ Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նիստ՝ քննարկել երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների արտահանման, ինչպես նաև ՀՀ տարածքով դրանց տարանցիկ փոխադրման վերահսկողության վերաբերյալ խնդիրները և անհրաժեշտության դեպքում ներկայացնել այն վիճահարույց առաջարկությունները, որոնց շուրջ ձեռք չի բերվել համաձայնություն:

5. Ինտերնետ հասանելիության ծառայություն մատուցելու նպատակով շահագործվող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի միջև թրաֆիկի փոխանակումը կանոնակարգելու մասին
---

(Ի. Մկրտումյան, Տ. Սարգսյան)

Ինտերնետ միության նախագահ Ի. Մկրտումյանը զեկուցեց ինտերնետ հասանելիության ծառայություն մատուցելու նպատակով շահագործվող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի միջև թրաֆիկի փոխանակման ապահովման համար ստեղծված «Արմիքս» հիմնադրամի ստեղծման մասին:

**Քննարկումներից հետո որոշվեց** հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանին՝ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ քննարկել ինտերնետ հասանելիության ծառայություն մատուցելու նպատակով շահագործվող հանրային

էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի միջև թրաֆիկի փոխանակման կանոնակարգման խնդիրը և տալ անհրաժեշտ լուծումներ։

6. Այլ հարցեր՝ օրենսդրական նախագծերի հրապարակայնության մասին
---

(Կ. Վարդանյան, Տ. Սարգսյան)

Առաջարկել «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ-ի գործադիր տնօրեն Կ. Վարդանյանին ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին ներկայացնել գրավոր առաջարկություններ՝ օրենսդրական նախագծերի քննարկման հրապարակայ-նության ապահովման և նոր մեխանիզմների ձևավորման վերաբերյալ։

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ
ԱՋԱԿՑՈՂ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ
ԱՋԱԿՑՈՂ ԽՈՐՀՐԴԻ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ